

կայ բան մը՝ որով որ մը պիտի պարծենամ եւ ուրախանամ, այդ բառին վրայ դրածս եւ անկէ հանած կղրակացութիւնս է: Այսքան չնչին բանէ մը այսքան մեծ կղրակացութիւն հանել՝ ինձ համար ալ անսպասելի եղաւ: Կիսնդրեմ որ հոն եղած թուանշաններուն վրայ առանձին ուշադրութիւն դարձնէք, որպէսզի տպագրական վրիպակ չսպրդի եւ ըսածս անհասկնալի մնայ: Թէեւ տոմարական խրթին հաշիւներ են եւ շատ մարդ չպիտի հասկնայ, բայց կան քիչեր եւ այդ քիչերը աւելի արժէն քան շատերը:

Թախանձազին կիսնդրեմ որ արտատպութեանս 161րդ էջէն սկսեալ ինչ որ կայ տպուած նաեւ այժմ, անմիջապէս ուղարկէք ինձ Բաղմովէսի համարներուն հետ՝ վերը յիշած հասցէովս (առանց առնելի):

Հոս կատարուած մեծագոյն նորութիւնը Ակադեմիայի հաստատութիւնն է. Ակադեմիան ունի 3 բաժին, գիտական (բժշկական, մաթեմատիկական եւն.), պատմական (պատմութիւն, լեզուաբանութիւն, հասարակագիտութիւն) եւ գեղարուեստական (նկարչութիւն, ճարտարապետութիւն): Արդէն ընտրուած են անդամները, դիտական ունի 12 անդամ, պատմականը 18, գեղարուեստականը 10: Կանոնադրութիւնը պատրաստ եւ հաստատուած է: Առաջին բացման հանդիսաւոր նիստը պիտի ըլլայ Ապրիլին: Այսուհետեւ արդէն ընտրուած անդամները պիտի ընտրեն աշխարհիս չորս կողմէն նորանոր անդամներ (պատմոյ անդամներ եւ թղթակից անդամներ), իրենց կողմը լրացնելու կամ հոշակաւոր անձանց պատիւ տալու համար: Ես մտադիր եմ պատմոյ անդամ առաջարկել պատմական բաժնի մէջ բոլոր հայ եւ օտար հայագէտները, նոյնպէս Վենետիկի եւ Վիեննայի Միաբանութեանց նշանաւոր գործիչները: Սպասենք Ապրիլին:


Յարգանաց բարեւներով

Ձերդ

Հ. ԱՃԱՌԵԱՆ

Յ. Գ.

Արեղեանը նոր գիրք մը գրեց, 200 էջ, իր ուղղադրութեան համար, տպուելու վրայ է, անմիջապէս կուղարկեմ ձեզ:



ԵՐԵՎԱՆԵՐՈՒ ԿԸԶԵՆ

ԵՐԵՎԱՆԵՐ... Է...

Ամէն երեկոյ պարսպին վրայ
Սիրտս կը դնեմ.
Սիրտս ծիրանի արեւ կը դառնայ,
Աչքերուս դէմ.
Երկինքն է անհուն,
Լընակն՝ ոսկեգոյն.
Երեկոյ է...:

Տոժերու փաղափն, հրակայ նուաճար,
Ծովէն դուրս կ'ելլէ.
Մարմինը ներակ, մարմինը մարմար
Արդէն հըրաշք է.
Իր գլխուն վրայ
Արփին կ'երերայ.
Երեկոյ է...:

Լընակն ոսկեղէն ցորենի արտ է,
Հովէն տարուբեր.
Քաղեմ ձեռքերովս, բայց լոյծ ալիք է.
Երազ անըստուեր,
Երազ է չորս դին,
Ցովքն համբոյր ցոլին.
Երեկոյ է...:

Լուռ երեկոյ է, առանց սահմանի
Լընին մէջ արփին
Կոյսի մը նըման հանդարտ կը հանգչի,
Սփռած ծիրանին.
Ծիրանին կարմիր
Եզերքն ոսկեծիր.
Երեկոյ է...:

Հոգիս ամէ ամի լուռ կը թափառի,
Աչքերս նաւակ.
Ա՛յս, աննիւթական կարապ ըլլայի,
Ջրանոյշ ներմակ.
Ծովեր անցնէի,
Դէմն արեւմուտի
Նոր աստղ ըլլայի.
Երեկոյ է...:

Երեկոյ է պարզ, խօսքերը մեղմիկ,
Բընուքիւնն արդար.
Ամէն բան հէֆեաք, ամէն տենչ՝ գաղտնիք,
Ինչպէս հին տանար,
Ինչպէս ֆաղցրութիւն
Սիրոյ ժամերուն.
Երեկոյ է...:

25 Հոկտ. 1967

ԸՆԾԱՅԱՐԱՆ

Այս այն վայրն է ուր մանուկներ կը նըխան
Անմեղութիւնը խառնելով կապոյտին.
Ու կը բախեն իրենց քեւերը նըման
Յորեններէն վերադարձող արտոյտին:

Ի՞նչ ցընծութիւն եւ ի՞նչ աղմուկ նոր կեանքի.
Երազն՝ ոսկի գոյնով օրեր կը պնեն,
Աչքեր լեցուն արեւներով հայրենի,
Որոնց վըրայ սէրը քառիլ միշտ կ'ուզէ:

Երամովին կը խառնուին իրարու,
Մէկը միւսէն անոյշ ժըպիտ կը ֆաղէ.
Կը դայլային նըման անքեւ ձագերու,
Բոյնի մը մէջ՝ քր ոսկեքել կապոյտ է:

Կարմիր որմե՛րը լընակին մէջ ծաղկած,
Վարդեր ըլլան առանց անցնող գարունի.
Կը բեկբեկին կը միանան գըրկաբաց,
Ծառերուն հետ որոնց ծայրերն են ոսկի:

Քերքուած մ'է նա, որուն էջերն են պարտէզ,
Մէջը ծաղիկ եւ անհանգիստ քիքեռնիկ.
Ուր սոխակին գեղգեղանքները կարծես,
Դեռ աւելի գարուն մ'ունին գեղեցիկ:

Ո՛վ մանկութիւն, որ երազներ լոկ ունի.
Ուր մարդկային չըկայ խըռով ցոգնատանջ.
Մանուկներ՝ որ կը նային միշտ երկնքի,
Եւ գեփիւտին շատ նըման է իրենց կանչն:

Խրաֆանչիւրն իր սրտին մէջն է պահած,
Այն սէրը որ մայրը կաքին հետ կու տայ.
Նըշխար մ'ինչպէս Զատիկի առտուն օրհնըւած,
Որուն առջեւ միշտ ծնրադիր սիրտ մը կայ:

Կու գան անոնք օնախներէն հայրենի,
Ամէն մէկն իր աչքերուն մէջ աստղ մ'ունի.
Որ կը մեծնայ եւ արեգակ կը փոխուի,
Տառերն ինչպէս կուրծքին վըրայ Մեսրոպի:

Ժամանակներն ապագայի տեսիլով
Իրենց հոգին երանութեամբ կը լեցնեն.
Խորաններու եւ երկնքի կարօտով,
Խրաֆանչիւր ֆայլն արեւուն կը համբեն:

Ու կը մեծնան արեւուն հետ, ամէն օր,
Զերդ նունուֆար՝ մաքուր ջուրի երեսին.
Ծառերու տակ, ծաղիկներու մէջ աղուոր
Հըրեշտակներ՝ որոնց քեւեր կը պակսին:

15 Սեպտ. 1966

ԱՐՇԱՆՈՅՄԸ

Արշալոյսն այստեղ ծովերէն կու գայ,
Ծովերու վըրայ պարող դիցունի.
Ու դանդաղօրէն արեւ կը դառնայ,
Ինչպէս սիրավատ հոգին ֆերքողի:

Ամէն օր տարբեր հանդերձանք ունի,
Ոսկի, ծիրանի՝ եղբայրներն արծաթ.
Զեմ գիտեր քէ ո՛ր հըրպարտ քագունի,
Այսօր անմարմին երազ կը փոխուի:

Ծառերուն վըրայ կը քափէ գոհար,
Կը ներկէ որմերն ոսկի քերքերով,
Հաւքերն այդ ժամուն կը կանչեն զիրար,
Դէպի արշալոյսն ուրախ քըռիչֆով:

Ու բարեւ կու տան մարդիկ իրարու,
Բարեւը լոյսի եւ երջանկութեան.
Այս պահն է անոյշ՝ կեանքը սիրելու,
Բախտը միշտ կու գայ առաւօտեան:

Երանի՛ քէ ինձ արշալոյսին գար
Օրհնէ՛քն երկնքին սիրտըս բանալու,
Շիրիմէն անդին իր դէմքը մընար
Համբոյրի նըման սիրելիներու:

22 Հոկտ. 1967

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ